

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝ ԾՆՆԴՅԱՆ 83-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Սույն թվականի սեպտեմբերի 20-ին, ուրբաթ օրը, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ռումինահայ նախկին մի խումբ աշակերտներ այցելեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածին և ջերմորեն ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից: Նրանք եկել էին հայտնելու իրենց սրտագին երախտագիտությունը Հայոց Հայրապետին և շնորհավորելու Նրա ծննդյան տարեդարձը՝ այս անգամ արդեն 83-րդը, և ցանկալու երկար տարիների քաջառողջ և բեղուն ազգանվեր գործունեություն:

Աշակերտները արտասանեցին իրենց սրտի խոսքերը սիրելի ուսուցչին:

ՁԵՐԴ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր հոբելյանական տարեդարձին նշվում է հոբելյարի կյանքի անցած ուղին, նրա վաստակը և արժանիքները: Սակայն Ձերն այլ է: Ձեզ գնահատում և Ձեր վաստակն ու արժանիքները ոսկյա տառերով պատմությունն է գրում: Իսկ մենք՝ Պուքրեշի Միսաքյան-Քեսիմյան ազգային վարժարանի Ձեր նախկին սաներս, այսօր, մայր հայրենիքում, որպես համայն հայ ժողովրդի մեկ մասնիկը, եկել ենք Ձեր սրբացած Աջը համբուրելու, մաղթելու քաջառողջություն, երկար կյանք ու նորանոր հաջողություններ Ձեր աստվածանվեր ու ազգանվեր հանապազօրյա գործունեության մեջ՝ ի փառս մեր Եկեղեցու, մեր ժողովրդի և վերածնված Հայաստանի: Անկասկած, նույնպիսի ջերմ զգացմունքներով և մաղթանքներով համակված են նաև համայն Սփյուռքում ապրող Ձերդ Սրբության նախկին աշակերտները:

Ձերդ Սրբության հովվության 35 տարիները միաժամանակ փոթորկալի ու երջանիկ ժամանակագրության տարիներ եղան:

Ձեր իմաստուն և ազգանվեր հովվության շնորհիվ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին վերածնունդ ապրեց, վերականգնվեցին պետության և Եկեղեցու միջև բարի հարաբերություններն ու համագործակցությունը, որոնք բնորոշ են եղել մեր ազգի հազարամյակների պատմության համար:

Հայաստանն իր բազմահազարամյա պատմության ընթացքում ունեցել է 10-ից ավելի մայրաքաղաք, սակայն Հայ Առաքելական Եկեղեցու Մայր Աթոռը միշտ եղել է Սուրբ Էջմիածինը:

Ձեր կյանքի հավատամքը Դուք ընտրել և նրանով առաջնորդվել եք դեռևս Ձեր երիտասարդ տարիներին, մինչև Ս. Էջմիածնին նվիրվելը: 1937 թ. հունիս ամսի «Հերկ» ամսագրի առաջին համարում այն ժամանակ տակավին երիտասարդ գրականագետ և լրագրող Լևոն-Կարապետ Պալճյանը, հայ հասարակությանը և մասնավորապես հայ երիտասարդությանը դիմելով, գրում էր. «Ամեն հայ մտավորականի ու երիտասարդի առաջին պարտքն է իր մտքով ու հոգիով վերածվել հնոցի մը, մեր հավաքականության պատկանող խնդիրները մտածելու նպատակով ու զանոնք նոր ձևերով, նոր լուծումներով դարբնելու հավատքով»:

Կարծես այսօրվա մեր իրականությունը կանխատեսում էր ապագա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, երբ ազգի ապագայի համար ծրագրեր էր նշում. «Պետք է ազգային հասարակական մտածումի տիպիքլինը ստեղծել:

Որովհետև, մանավանդ հետայսու, ազգովին մտածելով միայն կարելի է ազգովին ապրել:

Որովհետև մտածելով միայն կարելի է արդի կյանքի «ռիթմին» հետևել:

Որովհետև ազգային ճակատագրական հանգույցները մտածելով միայն կարելի է լուծել»:

1988 թ. դեկտեմբերի 7-ի ողբերգական արհավիրքից հետո Դուք, Ձերդ Սրբություն, չընկճվեցիք, այլ ընդհակառակը, պետության ղեկավարների կողքին ոչ մի ճիգ ու եռանդ չխնայեցիք և երիտասարդական ավյունով լծվեցիք երկրաշարժի հետևանքները թեթևացնելու ու խոր վերքերն ամոքելու հիրավի մարդասիրական ու ազնիվ գործին: Հենց այդ աղետալի օրերին էր, որ մեկ անգամ ևս հաստատեցիք ապագա գործունեության կարգախոսը՝ «Մեկ հայրենիք, մեկ Եկեղեցի, մեկ ժողովուրդ»:

Փոթորկալի վերջին երեք տարիների ընթացքում, լինելով ժողովրդի հետ, Ձերդ Սրբության իմաստուն խորհուրդներով և քայլերով միշտ ցույց եք տալիս մեր պայքարի ճիշտ ուղին և միջոցները՝ զերծ պահելով մարդկանց ծայրահեղություններից և անխոհեմ քայլերից:

Հայ Առաքելական Եկեղեցու հիմնադրման առաջին իսկ օրից մեր սուրբ Հայրապետները և Եկեղեցին ծառայել են ժողովրդին՝ ապահովելով նրա թե՛ հոգեկան, թե՛ մշակութային վերելքը: Եթե ճիշտ է, որ կրոնը քաղաքակրթության մղիչ ուժն է, ապա դրա վառ ապացույցը հանդիսանում են մեր Հայ Առաքելական Եկեղեցին և նրա սուրբ Հայրերը, որոնցից վերջինը՝ 130-րդը, Դուք, Ձերդ Սրբություն, նոր շունչ ու նոր ոգի տվեցիք Մայր Աթոռին և մյուս թեմերին:

Մենք, համայն աշխարհի հայերս, բախտավորություն ունենք լսելու, տեսնելու և կարդալու Ձերդ Սրբության իմաստուն, խորաթափանց, հուսադրող ու ոգևորող խոսքը: Դուք վերադաստիարակում եք մի ժողովուրդ, որը տասնյակ տարիների ընթացքում մոլորության մեջ էր ընկել: Ձերդ Սրբության աստվածանվեր և հայրենանվեր այս գործունեությունը ոսկյա

թելի նման փայլել է Հայրապետական Ձեր ամբողջ կենսագրության ընթացքում: Ձերդ Սրբության փետրվարի 14-ի 1991 փրկչական ամի և ի տոմարիս Հայոց ՌՆԽ կոնդակում, խոսելով Ավարայրի ճակատամարտի բախտորոշ նշանակության և Ս. Վարդանանց անմահության մասին, շեշտում եք. «Մեր ժողովուրդը պետք է լավ ճանաչի ինքն իրեն, ուղիղ հասկանա իր հարազատ ազգայինը, և սրբությամբ պահի պահպանի ամբողջ ու անաղարտ ու աննվազ այն, ինչ ստեղծվել ու հորինվել է դարերի ընթացքում մինչև մեր օրերը, և այդ ակունքների ավյունով հագեցած, հոգու նոր թռիչքով ու թարմ ուժերով, համամարդկայինը պայծառակերպելով ազգային ձևերի մեջ, բեղմնավորի իր նոր կյանքը, և հարստացնի իր ազգային մշակույթի բազմադարյան գանձարանը նոր վավերական արժեքներով, նոր խոսք ասելով մեր պատմությանը և համայն աշխարհին:

Մենք՝ հայերս, չպետք է մեզ շփոթենք այլ հին ժողովուրդների հետ, որոնք իրենց հոգևոր ու ազգային մշակույթի ոսկեդարը ստեղծել են մեզանից շատ դարեր առաջ, ինչպես օրինակ՝ հրեաները՝ Դավիթ-Սողոմոնյան շրջանում Քրիստոսից հազար տարի առաջ, կամ հելլեները՝ Պերիքլեսյան դարում, Քրիստոսից հինգ հարյուր տարի առաջ: Սուրբ Էջմիածինը՝ մեր Սողոմոնի տաճարն է, մեր ոսկյա հինգերորդ դարը մեր Պարթենոնն է, Ավարայրը՝ մեր Թերմոպիլեան է»:

Ինչպես ժամանակին Բուխարեստում Կայծակին, ինձ և ուրիշներին օգնեցիք կրթություն ստանալու, այնպես էլ Ձեր Հայրապետության 35 տարիների ընթացքում Գևորգյան ճեմարանը նորից դարձել է Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր ու մտավոր դարբնոցներից մեկը, որտեղ Ձերդ Սրբության իմաստուն և նպատակասլաց ղեկավարության ներքո աստվածանվեր ու խոստումնալի երիտասարդներն ստանում են հոգևորական բազմակողմանի կրթություն: Նրանցից լավագույնները շարունակում են իրենց կրթությունը Խորհրդային Միության և աշխարհի տարբեր համալսարաններում:

Շնորհիվ Ձերդ Սրբության ստեղծվել է հայ մտավորական հոգևորականություն, որը կկարողանա ժողովրդին ծառայել մեր Եկեղեցու և ազգի ավանդույթների ոգով:

Փիլիսոփա, աստվածաբան, քաղաքագետ, հռետոր, մանկավարժ, գրականագետ, արվեստագետ,— այսպես է գնահատում Ձերդ Սրբությանը ոչ միայն մեր ժողովուրդը, այլև օտարը:

Ձերդ Սրբության կյանքի յուրաքանչյուր օրը, հիրավի, բազմահատոր փառավոր պատմության մի լուսավոր էջ է:

Աղոթենք և խնդրենք Տիրոջը, որ Ձեր կյանքի օրերը բազմանան, լինեն ուրախալի ու երջանկաբեր՝ ի փառս Հայ Առաքելական Եկեղեցու, հայ ժողովրդի ու պետականության:

Հ. Թ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական ինստիտուտի
օտար և լատիներեն լեզուների և
բժշկական տերմինաբանության ամբիոնի
վարիչ, դոցենտ

*
* *

Ամենամյա սովորությամբ, Վեհափառ Հայրապետին շնորհավորելու Լին եկել նաև Արարատյան հայրապետական թեմի ներկայացուցիչները՝ բերելու իրենց որդիական հավատարմությունը ու երախտիքը Ամենայն Հայոց Հայրապետին:

ՎԵՀԱՓԱՌ ՏԵՐ

Թույլ տվեք Արարատյան հայրապետական թեմի համայն հավատացյալների անունից շնորհավորել Ձերդ Ս. Օծությանը, Ձեր Վեհափառության ծննդյան 83-րդ տարեդարձի առիթով:

Ինձ համար անգնահատելի պատիվ եմ համարում մեր բոլորիս անվերապահ զգացումների թարգմանը լինել՝ հայտնելով Ձերդ Ս. Օծության մեր բոլորիս նվիրվածությունը և ծառայելու մշտական պատրաստակամությունը մեր դարավոր Ս. Եկեղեցուն և նրա արժանավոր գահակալին:

Վեհափառ Տեր, մեր ազգի վերջին այս մի քանի տարիների ճակատագրական շրջանում Ձերդ Ս. Օծությունը հանդիսացավ Ավետարանի քաջ հովիվը, որ միշտ արթուն հսկում է իր հոտին: Ձերդ Վեհափառության հանապակի ելույթները, մամլո ասուլիսները, քաղաքական առողջ և հեռատես գործունեությունը փարոսը հանդիսացան մեր ժողովրդի ճիշտ կողմնորոշման:

Ծնորհիվ Ձերդ Ս. Օծության ջանքերին, վերածնունդ է ապրում Հայ Առաքելական Ս. Եկեղեցին՝ վերստանձնելով իր պատմական դերը հայ ժողովրդի կյանքի մեջ:

Իրականանում է Ձերդ Ս. Օծության 1956 թ. Կահիրեում խոսած մարգարեաշունչ այն քարոզը, ուր նշում էիք, որ առաջնորդելու եք մեր ժողովրդին, ինչպես Մովսես մարգարեն, դեպի Երկիր Ավետյաց:

Երկար և բեղմնավոր կյանք, Վեհափառ Տեր, և տա Աստված, որ Ձեր հայրապետության օրոք իրականանան մեր ազգի արդար երազները:

ԼԵՎՈՆ ԿԱՐԱՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱՊԱՐԳԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿ

Թույլ տվեք Ձեր Սուրբ ծննդյան 83-րդ երջանկաբեր տարեդարձի այս սրբազան պահին Արարատյան թեմի Հայ Եկեղեցու Երիտասարդաց Միության բոլոր անդամների՝ պատանիների և երիտասարդների անունից աղոթանց շնորհավորել Ձեզ և ասել. մենք մեր անմեղ հոգիներով ու շուրթերով, բոլորս միակամ և միահոգի, խորին երկյուղածությամբ աղոթում ենք ամենակարող Աստծուն, որ Ձեզ պարգևի ամուր առողջություն, անապառ ուժ և եռանդ ու երկա՜ր, շատ երկա՜ր տարիների կյանք, որպեսզի Ձեր օրինությամբ բացեք Երևանում կառուցվելիք նոր Մայր եկեղեցին:

Վեհափառ Հայր,

Մենք՝ Միության ներկայացուցիչներս, եկել ենք Ձեր օրհնությունը ստանալու, որպեսզի Ձեր խոսքերը լույսի նման թափանցեն մեր հոգիներ-

ից ներս, ինչպես առավոտյան թարմ ու մաքուր ցող իջնեն մեր վրա, որպեսզի մեր հավատքը մնա անսասան, մեր կյանքը՝ լուսավոր։

Ձեր օրհնությամբ Արարատյան թեմում հնարավոր եղավ մեկ տարի առաջ կազմակերպել մեր Միությունը և մեզ համախմբել։ Այսօր մենք Հայաստանի պատանիների մեջ ամենաերջանիկներն ենք, այն առաջինները, որ աղոթել սովորեցինք, մեր հոգիները վերանորոգեցինք և ըմբռնեցինք քրիստոնեական կրոնի ողջ վեհությունը, բարձր բարոյականությունը, մարդասիրական ոգին, Հայ Եկեղեցու գործունեությունը, նրա դերն ու նշանակությունը։ Վեհափառ Հա՛յր, թույլ տվեք ասելու, որ այսօր մեր բոլոր հասակակիցները սիրում են Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցին, նրա պետին՝ Ձեզ՝ Հայոց Հայրապետին, սիրում են ազատ ու անկախ դարձող մեր Հայրենիքը, մայրենի լեզուն ու մշակույթը։ Մենք մեզ հպարտ ենք զգում հայ լինելու և քրիստոնյա լինելու համար, Սուրբ Էջմիածին ունենալու համար։ Թույլ տվեք մեր շնորհավորանքներին միացնել նաև մեր խորին շնորհակալությունները՝ Երիտասարդաց Միության հանդեպ Ձեր և Գարեգին Սրբազան Հոր ցուցաբերած հոգատարության համար և ասել,

Կեցցե՞ Սուրբ Էջմիածինը, հավերժ ու անսասան Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հայորդյաց սիրելի Վազգեն Առաջին Հայոց Հայրապետը։

Օրհնեցե՛ք մեզ, Վեհափառ Տեր, և թույլ տվեք մեր բոլոր հասակակիցների անունից մեկ անգամ ևս շնորհավորել Ձեզ, Ձեր ծննդյան օրվա առթիվ, և համբուրել Ձեր սուրբ աջը։

ՆՈՒՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ

*

* *

Հատկապես հուզիչ էր պատերազմի և աշխատանքի վետերանների այցելությունը։ Նրանք եկել էին արհավիրքի և տառապանքների բովով անցած կենսափորձով իրենց որդիական հավատարմությունը հայտնելու Հայոց Հայրապետին։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ

Պատերազմի և աշխատանքի վետերանների համահայկական «Ապագանի» միության պատվիրակությունը պատիվ ունի այսօր, 1991 թվականի սեպտեմբերի 20-ին, Էջմիածնի Ձեր սուրբ օջախում ողջունելու Ձեզ՝ Ձեր ծննդյան 83-րդ տարեդարձի առթիվ։

Սրբազան Հայրապետ, մեծ քաղաքացի, հայ ժողովրդի արժանի զավակ, մեզ բոլորիս քաջ հայտնի են Ձեր ծառայությունները, հայտնի է, որ Դուք Ձեր ամբողջ գիտակից կյանքն ու գործունեությունը նվիրել եք ժողովուրդների բարեկամությանը, Ձեր արժանի ավանդն եք մատուցել այդ բարեկամությունը ավելի նշանակալից ու բովանդակալից դարձնելու համար։ Ձեր արած գործերը միշտ էլ գրավում են յուրաքանչյուր բարի մարդու ուշադրությունը, արժանանում հայ ժողովրդի համակրանքին։

Բարի երթ Ձեր բարի գործերին։ Թող Ամենակալը իրականություն դարձնի Ձեր բարի ցանկությունները։

Թող Աստված պարգևի Ձեզ, սիրելի Վեհափառ Հայրապետ, երկար կյանք, երջանկություն, ծննդյան բազմաթիվ տարիների տոնակատարություններ,—դա մեր և բոլոր բարի մարդկանց ցանկությունն է։

Վետերանների համահայկական միությունը ճորից և ճորից ողջունում է Ձեզ, ծննդյան օրվա առթիվ, խոնարհվում Ձեր մեծության առաջ։ Թող այդ մեծությունը ապրի ու տարածվի աշխարհով մեկ։

ՍԱՐԳԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ